No ԿԹ-124 առ 01.07.2026 թ. գրությանն առդիր

Ձև-2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ԿԱՄԵՐԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԼՈՒՍԻՆԵ ԵՐՆՋԱԿՅԱՆԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-30-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԹԲԻԼԻՍԻԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎՐԱՍՏԱՆ (ՔԱՂԱՔ ԹԲԻԼԻՍԻ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը. –**

Լուսինե Երնջակյան, «Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն, ռեժիսոր:

2. **Գործուղման վայրը և ժամկետները. –**

Վրաստան, ք. Թբիլիսի, 2026 թվականի հունիսի 27-30-ը ներառյալ:

3. **Հրավիրող կողմը. –**

Թբիլիսիի միջազգային թատերական փառատոնի (Tbilisi International Festival of Theatre) գեղարվեստական ղեկավար Եկատերինա Մազմիշվիլիի հրավերով (հրավերը կցվում է):

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). –**

Գործուղման հիմնական նպատակն էր մասնակցել Tbilisi International Festival of Theatre միջազգային թատերական փառատոնին, որի շրջանակում 2026 թվականի հունիսի 28-ին «Theatre Factory 42» թատերական հարթակում ներկայացվել է Երևանի կամերային պետական թատրոնի «ԱԶՆԱՎՈՒՐ. ճանապարհորդություն ժամանակի և երաժշտության միջով» ներկայացումը:

Գործուղման նպատակն էր միջազգային մշակութային հարթակում ներկայացնել հայկական թատերարվեստը և Հայաստանի ազգային հերոս, աշխարհահռչակ շանսոնյե Շառլ Ազնավուրի ստեղծագործական ժառանգությունը, ամրապնդել թատրոնի միջազգային կապերը, ընդլայնել համագործակցության շրջանակը և քննարկել ապագա համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները:

Ներկայացումը մեծ հետաքրքրությամբ և ջերմ ընդունելությամբ է արժանացել հանդիսատեսի կողմից: Ներկայացմանը ներկա է գտնվել շուրջ 260 հանդիսատես, այդ թվում՝ մոտ 30 հրավիրված հյուր: Դահլիճում ներկա էին նաև Թբիլիսիի հայկական համայնքի բազմաթիվ ներկայացուցիչներ, որոնք բարձր են գնահատել ներկայացման գեղարվեստական մակարդակը և կարևորել Հայաստանի պետական թատրոնի մասնակցությունը միջազգային փառատոնին: Ներկայացումից հետո համայնքի

ներկայացուցիչներն իրենց ցանկությունն են հայտնել, որպեսզի Երևանի կամերային պետական թատրոնը հետագայում ևս հյուրախաղերով հանդես գա Թբիլիսիում:

5. **Քննարկված թեմաները. –**

Փառատոնի շրջանակում տեղի ունեցած մասնագիտական հանդիպումների ընթացքում քննարկվել են հետևյալ հարցերը.

• «Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ-ի հնարավոր մասնակցությունը Թբիլիսիի միջազգային թատերական փառատոնին հաջորդ տարի,
• Հայաստանի և Վրաստանի թատերական կազմակերպությունների միջև համագործակցության ընդլայնման հնարավորությունները,
• ժամանակակից թատերարվեստի զարգացման միտումները,
• միջազգային մշակութային փոխանակումների և մասնագիտական փորձի փոխանակման կարևորությունը,
• համատեղ ստեղծագործական նախագծերի, փառատոնային ծրագրերի և հյուրախաղերի կազմակերպման հնարավորությունները:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը. –**

ա) Հանդիպում Թբիլիսիի միջազգային թատերական փառատոնի գեղարվեստական ղեկավար Եկատերինա Մազմիշվիլիի հետ.

Կայացել է աշխատանքային հանդիպում փառատոնի գեղարվեստական ղեկավար Եկատերինա Մազմիշվիլիի հետ, որի ընթացքում քննարկվել են «Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ-ի հնարավոր մասնակցությունը փառատոնի հետագա ծրագրերին, ինչպես նաև միջազգային համագործակցության ընդլայնման, ժամանակակից թատերարվեստի զարգացման, մասնագիտական փորձի փոխանակման և համատեղ նախագծերի իրականացման հեռանկարները:

բ) Հանդիպում Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնում.

Կայացել է հանդիպում Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի տնօրեն Արմեն Բայանդուրյանի հետ:

Հանդիպման ընթացքում կազմակերպվել է շրջայց թատրոնում, ներկայացվել են թատրոնի գործունեությունը, ընթացիկ ծրագրերը և ստեղծագործական աշխատանքները: Այնուհետև քննարկվել են թատրոնի զարգացման ընթացիկ մարտահրավերները, ժամանակակից թատերական գործընթացները, ինչպես նաև Երևանի կամերային պետական թատրոնի հյուրախաղերի կազմակերպման և հետագա համագործակցության հնարավորությունները:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը. –**

Գործուղման ընթացքում կայացած հանդիպումների շրջանակում քննարկվել են «Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ-ի՝ Թբիլիսիում ապագայում հյուրախաղերով հանդես գալու հնարավորությունները:

Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի շենքը ներկայումս գտնվում է վերակառուցման փուլում, իսկ շահագործման հանձնումը նախատեսվում է 2026 թ. նոյեմբերին: Վերաբացումից հետո կողմերը պատրաստակամություն են հայտնել վերադառնալ հյուրախաղերի կազմակերպման հարցի քննարկմանը և, հնարավորության դեպքում, իրականացնել Երևանի կամերային պետական թատրոնի հյուրախաղերը Թբիլիսիում:
Պայմանավորվածություն է ձեռք բերվել պահպանել մասնագիտական կապերը, շարունակել տեղեկատվության փոխանակումը և համապատասխան պայմանների առկայության դեպքում քննարկել համագործակցության հետագա ձևաչափերն ու համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները:
Գործուղման ընթացքում որևէ փաստաթուղթ չի ստորագրվել:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները. –**

Նպատակահարմար է շարունակել համագործակցությունը Թբիլիսիի միջազգային թատերական փառատոնի և Վրաստանի թատերական կազմակերպությունների հետ՝ մասնակցելով միջազգային փառատոնային ծրագրերին, ստեղծագործական փոխանակումներին և համատեղ մշակութային նախաձեռնություններին:
Առաջարկվում է 2026-2027 թվականների ընթացքում պահպանել մասնագիտական կապերը փառատոնի կազմակերպիչների և Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի հետ, պարբերաբար իրականացնել տեղեկատվության փոխանակում և քննարկել համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները:
Ակնկալվում է, որ ձեռք բերված պայմանավորվածությունները կնպաստեն Հայաստանի և Վրաստանի միջև մշակութային համագործակցության խորացմանը, «Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ-ի միջազգային գործունեության ընդլայնմանը, հայկական թատերարվեստի առավել լայն ներկայացմանը միջազգային հարթակներում, ինչպես նաև երկարաժամկետ ստեղծագործական համագործակցության ձևավորմանը:

“Երևանի կամերային պետական թատրոն”
ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Լուսինե Երնջակյան

01.07.2026 թ.